ԱՐՕՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԱՋԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՀԱՅԱՆ ՄԻԱՄԵԱՅ



ՅԵՐՈՒՍԱՂԷՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
1872

digitised by A.R.A.R.@



ԱՐՕՏ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 3·

ԱՄԱԱԳԻՐ

ՄԱՐՏ 31·
1872·

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՈՐԴԻՔ ԱՍՏՈՒԾՈՅ

ԽՕՍՔ ԱՌՍԱՆՑԻՆ

Տեսէք որպիսի սէր շնորհեաց մեզ Հայր՝ զի որդիք Աստուծոյ կոչեսցուք և մեք՝ վասն այնորիկ աշխարհ ոչ ճանաչէ զմեզ՝ քանզի ոչ ծանեաւ զնա։ Սիրելիք՝ այժմ որդիք Աստուծոյ եմք՝ և չէ եւս է յայտ՝ եթէ զինչ լինելոց իցեմք՝ գիտեմք զի յորժամ նա յայտնեսցի՝ նման նմա լինելոց եմք՝ զի տեսանելոց եմք զնա որպէս և էն։ Եւ ամենայն որ ունի զայս յոյս յանձին՝ սրբեսցէ զանձն իւր՝ որպէս և նայն սուրբ է։ Ա. Յովհ. Գ. 1—3։

Տակաւին խօսքս չըսկսած տխուր գաղափար մի կը պաշարէ զիս, և ա՜հա այն տխուր գաղափարին վրայ կը պարտաւորիմ նախ և առաջ դարձուցանել ձեր ուշադրութիւնը։ Որո՞ն կ'ուղղէ Առաքեալն իւր խօսքերն։ Ո՞յք են այն մարդիկն, զորս կ'ողջունէ Որդիք Աստուծոյ գեղեցիկ անուամբ և կը հրաւիրէ խորհիլ և զմայլիլ երկնաւոր Հօր անճառ ու անպատում սիրոյն վրայ։ Նշմէ առաքելական թղթոյ միւրնագրին նայինք, հանուր մարդկութեանը կ'ուղղէ իւր խօսքն, վասն զի թուղթն կաթոլիկէ է, որ է

digitised by A.R.A.R.@

ընդհանրական կամ տիեզերական։ Բայց գիտէք դուք ամենքդեան, որ թղթոյ պարունակութեան տիեզերքն քրիստոնէական տիեզերքն է և յիշեալ թուղթն գրուած ժամանակ սոյն տիեզերքն կամ քրիստոնէից թիւն շատ անձուկ էր և աննշմարելի։ Ոչքա համարեա թէ կորուսուած էին Սորեստանի, Փոքր Ասիոյ, Յունաստանի և Իտալիոյ քանի մի քաղաքաց հեթանոսական բազմամարդութեան մէջ։ Ոչքա ցրուած էին աստ և անդ և համարուած էին իբրեւ աննշան աղանդաւորներ և մատնուած անարգանաց։ Հաղիւ թէ աշխարհն սկսած էր ճանաչել զնոսա և այն ատելով և թշնամանելով։ Տակաւին խիստ սակաւաթիւ էին, այս մի բուռն յիմարաց մէջ, աղնուականներն, մեծատուններն, գիտնականներն։ Այս հիւանդութիւնը, թող ներուի ինձ այսպէս անուանել, ուրիշ մեծամեծ հարուածոց նման ընդհանրապէս միայն աղքատներու մէջ ճարակուած էր։ Այսպէս էր այն ժամանակ քրիստոնեայ աշխարհն, կամ, աւելի մեր բնաբանին համաձայն ասել, այսպէս էր այն ժամանակ Աստուծոյ գերդաստանն երկրիս վրայ։ Կը համարձակիմք հաւատալ, որ նոյն ժամանակէն ի վեր բազմացած է սոյն գերդաստանն։ Այսօր մարդկութեան մի մեծ մասն քրիստոնեայ է և աղգաց զանազան կրօնքներն մի ղկնի միւսոյ կուգան անհետիլ Յիսուսի Քրիստոսի կրօնի ընդարձակ ծոցին մէջ։ Բայց, եթէ լոկ անուն ու արտաքին պաշտամունքն թողունք, որք առանց ներքին ճշմարիտ աստուածպաշտութեան, արժէք չունին, եթէ ընդունինք, որ պատով միայն կարող է մարդ անդամ լինիլ հոգեւոր գերդաստանին, այնուհետեւ կարող են ալդեօք ճշմարիտ որդիք Աստուծոյ համարուիլ ամեն մարդիկ, որոնք քրիստոնեայ կը կոչուին։ Տարակոյս չկայ, որ ամեն արթուն խիղճ ունեցող ունկնդիր բացատական պատասխան պիտի տայ սոյն հարցմանը, և անշուշտ նոյն որոշմութեամբ պիտի համակուի Աստուածաբելոյն խօսքերէն, որով մեք համակուած ենք։

Այս որոշմութիւնը բնական է, եղբարք։ Այս որոշմութիւնն մեր հաւատոյ կարեւոր, բայց խիստ ու անաչառ փորձն կամ հանգէսն է։ Ինչպէս կարող են մեր սրտերը չը ցաւիլ և չմլուիլ, երբ կը տեսնենք որ այնքան անմահ էակներ, այնքան ծագմամբ, ցեղով ու գոյութեամբ մեզ նման մարդիկ, տակաւին կը վաճառեն իրենց անդրանկութեան իրաւունքն կորստական կերակրոյ համար։ Հապա մեզ համար ինչ ասենք, երբ մենք եւս կը վաճառենք։ Այն մարդիկն, որոնք իբրեւ անիմաստ սեթեւեթ կը մեկնեն Աստուծոյ որդի տիտղոսն, նոքա կը մատնեն ճշմարտութիւնը սնապարծութեամբ, յանդգնութեամբ և թշնամանօք։ Բայց նոցա անձնական ազդմունքներն կամ կարծիքներն կարող չեն երբէք նսեմացնել Ս. Գրոց լեզուն։ Հաստատապէս կարող ենք ասել, որ Սուրբ Գրքն անխտրապէս ամեն մարդոյ ջրտար Որդի Աստուծոյ անուն և ոչ իրաւամբ ամեն մարդոյ կը պատշաճի նոյնն։ Սակայն, եղբարք, մենք եւս, Ս. Գրքի հետ կանխաւ ամենամեծ դգուշութիւն պահպանենք։ Աստուած հոգիներու հայրն է։ Նա հայր է ամեն էակներու, որոց մէջ կը բնակի անմահ հոգի։ Նա հայր էր նոյն էակներուն յառաջքան իրենց ստեղծուիլն։ Նա հայր էր նոյն էակներուն, երբ նոքա տակաւին իւր դի-

digitised by A.R.A.R.@

տաւորութեան և կամաց գաղտնութեան մէջ էին։ Աստուած 'ի յաւիտենից կը կրէր ամենքն իւր ծոցին մէջ։ Նա կը ճանաչէր ամենքն ականէ յանուանէ։ Նա գիտէր և կը կոչէր ըստ իւրաքանչիւր անուան։ Նա կը սիրէր ամենքն իբրեւ որդիք։ Երբ սոյն գաղտնի, խորհրդաւոր և իրեն միայն յայտնի գոյութենէն կոչեց 'ի գոյութիւն արարչագործական, որ յայտնի է իւրաքանչիւր էակներուն, նորա սէրն, որ ստիպուած էր տիեզերաց ամեն կողմը սիրելու առարկայ ունենալ. նորա սէրն, որով ստեղծած էր ամեն էակներ. նորա սէրն չդադարեցաւ ամենքն գրկել, և ամենեւին յետս չը կոչեց Որդի պատուանունն, զոր կը կրէր իւր յաւիտենական խորհրդոց մէջ։ Աստուծոյ անհուն գիտաւորութեանն նայելով՝ մենք որդիք էինք Աստուծոյ և եմք ստկաւին։ Այց սոյն պատուանունն իւր պարունակութեան ընդարձակութեամբ և իւր նշանակութեան բոլոր ուժով և ըմբռնմամբ, ունի անշուշտ գիտաւորութեան և զգացման փոխադարձ իմաստ։ Աստուած հոգի է, ուրեմն և մեք մեր հոգեւոր բնութեամբ միայն որդիք եմք Աստուծոյ։ Մեր արտաքին ծագումն, մեր մարմնաւոր գոյութիւնն արժէք չունի, եթէ համապատասխան և հաստատող չէ մեր ներքին էութեան։ Աստուած ինքն չը ճանաչեր զմեզ, եթէ մենք մեր կամքով չը միանանք նորա կամաց հետ։ Երբ մենք սրտով Աստուծոյ որդիք չենք, Աստուած ևս մեր հայրն չէ։ Կը համարձակիմ ասել, որ Աստուծոյ բնութիւնն, որ բոլորովին սուրբ է, չը թողուր որ նա մեզ հայր լինի։ Աստուծոյ համար բնաւ անհնարին չէ այլ ևս Աստուած չը լինիլ մեզ։ Եւ նա Աստուած չը լինի այնուհետեւ, եթէ Որդի անունն աղարտէ և այնպիսի էակներու տայ, որոնք իրենց բովանդակ կենաց մէջ, աստուածութեան իրաւունքն ուրանալով, կ'ուրանան զնոյն ինքն Աստուած և ոչ այլ ինչ է իրենց սրտի խորհուրդն, եթէ ոչ անզգամութիւն, անաստուածութիւն, ինչպէս կ'ասէ Ս. Դաւիթն. "Ասաց անզգամն 'ի սրտի իւրում՝ թէ ոչ գոյ Աստուած"։

Որդի Աստուծոյ անունն մեզմէն յափշտակող Աստուած չէ, որ իւր անհուն սիրով տուաւ մեզ զայն յաւիտեան կրելու համար. այլ մեք եմք որ ինքնին կը կողոպտուիմք նոյն ցանկալի անունէն։ Մեք եմք յափշտակողներն, վասն զի մեք եմք որ յափշտակեցինք և բռնաբարեցինք Աստուծոյ հայրուիը։ Մեղքն, որ ուրացութիւն է աստուածուէ. մեղքն որ մերժումն է մեր իրաւանց և պարտուց. մեղքն, որ լքումն է մեր օրինաւոր վիճակին և նպատակին. մեղքն մի սեաւ գիծով ջնջեց մեր որդիական ծագման, աստուածային ընտանութեան և երկնային քաղաքացիութեան արտօնագիրն։ Նախահայր Ադամէն սկսած՝ մեք ոչ այլ ինչ եմք, եթէ ոչ սերունդ մեղաւորաց։ Մեղաւոր ենք մեք ինքնին, մեղաւոր աղատօրէն, վասն զի մեր խիղճն բնաւ չը հաւանիր սոյն խառնակութեան և անկարգութեան։ Մենք կուգանք մի զկնի միւսոյ ձեռնագրել և վաւերացնել այս անմիտ անժառանգութիւն։ Մեր բնական վիճակին նայելով և մեր ծննդեան ու կենաց պարագաները նկատելով չկան բնաւ որդիք Աստուծոյ։ Այս Հօրն հոգւոյ երկիրս անապատ է. նա միայն կը բազմամարդի ըստ օրինաց բնութեան, բայց կը բազմամարդի ապականեալ էակներով և մի հատ բնակիչ անգամ չունի Դրախտի սամ-

digitised by A.R.A.R.@

յուԹեան համար։

Այս խօսքը խիստ է, բայց ճշմարիտ է։ Այս խօսքն Աւետարանի հիման վրայ հաստատուած է և ով որ հիմունքը մերժէ, բովանդակ Աւետարանը կը մերժէ եւ կ'ուրանայ։ Բայց հարկ է որոշել և վճռել, կամ ընդունել Աւետարանի հետ և կամ մերժել դարձեալ Աւետարանի հետ, վասն զի ուրիշ միջոց կամ հնարք չը կայ։ ԼիԹէ խիստ է սոյն խօսքն և մեր զայրոյԹն կը շարժէ, կը նշանակէ Թէ մեր խիղճն քնացած է և անխօսուն, կը նշանակէ Թէ՝ մենք տակաւին չեմք ճանաչեր զմեզ, չեմք ճանաչեր զԱստուած. կը նշանակէ որ մեք տակաւին քննուած և դատուած չեմք յանդիման օրինաց Աստուծոյ։ Այն մարդիկն, որոց նոր կ'երևի սոյն ճշմարտութիւնն եւ հետեւապէս զայրացուցիչ, Թոյլ որոնեն զայն Աւետարանի մէջ և անշուշտ կը գտնեն։ Թոյլ որոնեն իրենց սրտի մէջ, և կը տեսնեն զայն՝ իւր արմատացած։ Այս քննութիւնն ու փորձն առնելու համար՝ ժամանակ պէտք է, ժամանակ՝ յատկապէս քրիստոնեայ դառնալու համար։ Բայց Թոյլ հաճին մեր ունկնդիրներն այժմ մեր բացատրութիւնքն լսելու, որով պիտի բացատրեմք Յովհաննէս առաքելոյն խօսքերն։ Թոյլ հետեւին մեզ այն սուրբ ճանապարհին վրայ, որով կամիմք ընթանալ՝ Աստուծոյ օգնութեամբն ապաւինելով։

Այս ամենեւին պիտի փորձ չը փորձեմ ասել ձեզ, Թէ յետ Թշուառանկման մերոյ, ինչ եմք մեք ի սիրտ Աստուծոյ, և Թէ ինչպէս իւր արդարութեան եւ բարութեան կրկնակի գաղտնեաց մէջ վերցուցած կամ դրած է մեր վրայ Արդ՝ կոչումն։ վասն զի աստուածային խորհուրդներն անհաս են մեր ակարութենէն։ Միայն կը սիրեմ յիշեցնել ձեզ Ս. Գրոց մեծահռչակ և սրտաշարժ խօսքն։ «Աստուած ոչ կամի զմահ մեղաւորին, այլ զդառնալ նորա և զկեանն»։ «Կամի Աստուած, որ ամենեքեան ճանաչեն ճշմարտութիւնը։ Ի ձեռն միակ Միջնորդի և Փրկչի մարդկութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Աստուած այնչափ սիրեց զաշխարհ, մինչեւ իւր Միածին Որդին տուաւ, որպէս զի ով որ հաւատայ, յաւիտենական կեանք ունենայ։ Յիսուս Քրիստոս ոչ միայն մեր մեղաց քաւութիւնն է, այլ և ամենայն աշխարհի»։

Ինչպէս որ սոյն խօսքերն կը կարդանք Ս. Գրոց մէջ, նմանապէս կը կարդանք ուրիշ խորհրդաւոր և ահաբեկող խօսքեր։ Մի կողմէն կը տեսնենք որ Յիսուս Քրիստոս բովանդակ աշխարհի քաւութիւնն է, եւ Հայրն Աստուած համայն աշխարհի համար զրկած է իւր Միածին Որդին։ իսկ միւս կողմէն կը տեսնենք, որ միայն նոքա կարող են յաւիտենական կեանք ունենալ և որդիք Աստուծոյ լինիլ, որոնք կը հաւատան։ Արդ՝ երբ Ս. Գրոց խօսքերն իրարու հետ կը համեմատենք, կը տեսնենք ակներեւ, որ ոչ միայն հակիմաստ չեն, այլ անքուծանելի կապ և դաշնակաւորութիւն ունին իրարու հետ։ Ճշմարիտ է, որ Աստուած կամեցած է և կը կամի, որ ամենեքեան որդիք Աստուծոյ լինին։ Ճշմարիտ է, որ Աստուած սրբուած է և կը սիրէ իւր շնորհքն ամենուն վրայ։ Ճշմարիտ է, որ Աստուած կարկառած է և կը կարկառէ իւր հայրական ձեռքն առ ամենեսեան։ Բայց եթէ մարդիկ ապստամբին որդիութենէ, մերժեն Աստուծոյ շնորհքն ու կարկառած ձեռքն, ինչպէս կարող են դարձեալ որդիք Աստուծոյ լի-

digitised by A.R.A.R.@

նել։ Աստուած կը փափաքի մեզաւորաց դարձին։ Աստուած կ'աղօթէ նոցա համար և երբ իւր փափաքն ու աղօթքն կը մերժուին մարդիկերէն, ինչպէս կարող են նոքա որդիք Աստուծոյ լինիլ։ Աստուած կամի և մարդիկ եւս պարտին կամիլ, որ փրկուին և յաւիտենական կեանք ունենան։

Հեռաւապէս, ով որ կը լսէ Աստուծոյ շնորհաց կոչումն, ով որ կը ստորագրէ խաղաղութեան դաշն ու պայմաններն, ով որ կը խոստովանի 'ի ժամու և 'ի տարաժամու Աստուծոյ ձըրի շնորհքն, միով բանիւ, ով որ վերատին Յիսուսի Քրիստոսի իրաւարարութեանն ու միջնորդութեան կը դիմէ, նա որբ չը մնար, այլ կը մտնէ 'ի ժառանգութիւն իւր կորուսեալ վիճակին և 'ի վայելումն որդիք Աստուծոյ փառաւոր կոչման։ «Բանզի ամենեքին որդիք Աստուծոյ էք՝ հաւատովք 'ի Յիսուս Քրիստոս»։ Գաղ. Գ. 26։ Այն սքանչելի տիտղոսն նոյն վայրկենին մարդուն կը պատկանի, երբ հանդիսապէս կը հռչակէ զայն և կը յօժարի կրել յանձին, բանիւ և գործով։ Այս յօժարութիւնն, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ հաւատոյ քրիստոնէական, եթէ սրտի անկեղծութեան խորքէն բղխած է, եթէ բոմանդակ մարդն նորա համար երաշխաւոր կանգնած է, եթէ հոգւոյ խորութեան և լուութեան մէջ արձանագրուած է, այս յօժարութեամբ, անմիջապէս, ստորուկն՝ որդւոյ վիճակ կը ստանայ, և գերին՝ ազատի։

Սարկութեան և որդիութեան մէջ, չը կայ բնաւ անորիշ միջոտահման, չը կայ բնաւ յերկոցունց բաղադրեալ կացութիւն։ Չկայ բնաւ ուրիշ անուն այս երկու անուանց մէջ. գերութիւն կամ ազատութիւն, ստոր կամ որդի, տէր կամ հայր, ահա այն երկու կացութիւնէն մին կոչուած է մարդ անշուշտ ընտրելու։ Եւ մարդ կայրն կամքն իսկ երկուսէն մին միայն կարող է առնել, կամ որդի կացուցանել զմարդ, եթէ չը կամի գերի լինել, կամ պահել գերութեան մէջ, եթէ չը կամի որդի լինիլ։

Բայց երբ կ'ասենք, որ մարդ կարող է որդի Աստուծոյ լինիլ իւր կամեցողութեամբ և յօժարութեամբ, պէտք է նաեւ այս կամքն ու յօժարութիւնն պարզել, որպէս զի չը սխալինք։ Կամքն, որ բարոյական իրողութիւն մ'է, կ'ենթադրէ և կամ մանաւանդ կը հաստատէ ու կը յայտնէ հոգւոյ վիճակն, թէ ինչ դրութեան մէջ է։ Կամքն է յաջորդող վիճակի սերմն կամ սկզբունքն։ Այս կ'ամփոփէ իւր մէջ բոմանդակ ապառնի քրիստոնեայն։ Եւ թէպէտ այնչափ նուրբ է կամաց սոյն վիճակն որ դժուարին է քննել, նկարագրել կամ պատմել, բայց այսչափ գոնէ կ'ասենք, որ այնչափ բուռն է իւր էութեան մէջ, այնպիսի խոր աղբիւրէ կը բղխի, այնքան մեծ զօրութեանց կապակցութենէ կը ծագի և այնպէս բոմանդակ մարդն կը պատկերացնէ, որ կարող ենք, յառաջ քան իւր զարգացմունքն ու հետեւանքներն, համարձակ զայն իբրեւ յայտնութիւն բարոյական նոր կենաց, իբրեւ արարչութիւն նոր բնաւորութեան. և այսպէս, առանց յափշտակութեան, որդի Աստուծոյ տիտղոսն տալ այն մարդուն, որոյ կամաց մէջ յիշեալ հզօր յեղափոխութիւնը կատարուած է։

Բայց առաջին տեղին միշտ Աստուծոյ կամացն պիտի տանք։ Անոնք կը կրենք որդի Աստուծոյ անունն, վասն զի նա ինքն հաճեցաւ տալ մեզ զայն։ Աստուած է, որ նոյն անունն կը շնորհէ մեզ արեամբ Յիսուսի Քրիստոսի։

digitised by A.R.A.R.@

բիստոսն։ Այս է, որ կը հրաւիրէ ըզ-մեզ նոյն անուանն զգենուլ։ Այս է, որ կը սատիպէ զմեզ արժանանալ, զօրանալ, առաւելուլ նոյն անուամբ։ Այս-բան բանիւ միայն կը համարձակիմք նոյն անուան տիրանալ։ Ուանց նորա խօսքին ոչ մի փորձ կարող էր առաջ նորդել մեզ նոյն անուանն ժառանգելու, կամ լաւ եւս ասել մենք երբեք կարող չէինք սոյն օրինակ փորձ մի փորձել։ Լաւ կշռենք Աստուածայ խօսքը, որ կ'ասէ. «Տեսէք, որպիսի սէր շնորհեաց մեզ Հայր, զի որդիք Աստուծոյ կոչեցուք և մեք»։ Անք չեմք, որ կը կոչեմք զմեզ, այլ ԷՐԷ-ԻՆ։ Տակաւին մեր անուան կամ կոչման յատկութենէն յառաջ գալիք ամէն զգացումներն չը զգացած և ամէն փորձերն չը փորձած, մենք արդէն ունինք մեր յատկութեան տիտղոսն։ Մենք, թէ և անարժան, կ'ընդունինք նոյն կոչումն այն ժամանակ, երբ կ'ընդունինք Յիսուսի Քրիստոսի միջնորդութեան առհաւատչեայն շնորհական։ Մենք պարտաւորենք ընդունիլ զայն, թէ և կը շփոթէ և կ'ամաչեցնէ զմեզ։ Մենք պարտաւորենք ընդունիլ զայն իբրեւ պարգեւ յառաջ քան վայելելն և տիրանալն իբրեւ բնաւորութիւն կամ սեպհական յատկութիւն։ Պէտք է զարդարինք մենք նոյն տիտղոսով՝ թէ արտասուօք, թէ զղջմամբ, թէ ուրախութեամբ և թէ ցաւօք միանգամայն և թէ յաւէտ խորին երախտագիտութեամբ։ Պէտք է ոչ թէ լոկ 'ի ցոյց հանել զայն, այլ կրօնապէս ամփոփել մեր գանձարանի մէջ. կամ, աւելի ճիշդ ասել, մեր միակ գանձն համարել։ Միով բանիւ, պէտք է ընդունիլ եռանդուն փութով, երկիւղած յարգանաք, սուրբ ծարաւով և անոյշ ցանկութեամբ։

Այս պարագայիս մէջ, տարակուսելն կամ երկնչելն՝ յիմարութիւն է. իսկ մերժելն կամ ժխտելն՝ ապերախտութիւն։

Սոյն տիտղոսն ընդունելով կ'երկնչինք արդեօք յանձնապաստան և յանդուգն լինելու։ Այց իմացէք, որ սոյն տիտղոսն ձեզ շնորհուած է և նաեւ պարտք դրուած է ձեր վրայ կրել զայն։ Կ'երկնչինք արդեօք վերաւորել ձեր նմաններն այնպիսի անուն իւրացնելով ձեզ, զոր նոքա կը մերժեն։ Այց դուք իբրեւ ողորմութիւն ստացած էք զայն։ Դուք ընդունած էք զայն իբրեւ վկայութիւն ձրի շնորհաց և անհուն սիրոյ։ Ամենեքեան հաւասար իրաւունք ունեին ձեզ հետ զայն ժառանգելու։ Նոքա կարող էին և կարող են ընդունիլ զայն և պատկ բոլորել նովաւ, ինչպէս և դուք։ Պէտք է միայն, որ նեղողութեան և գթութեան Հօրն երկնաւորի, պէտք է միայն ընդունիլ զայն։ Արդի է նա Աստուածայ, ով որ կամ լինիլ, և նա միայն զրկուած է այն պատիւէն, ով որ կ'արհամարհէ զայն։ Թէ մանաւորաց համար առանձնաշնորհութիւն եղած է նոյն կոչումն, պատճառն նոքա են, որոնք չը կամին նոյն տիտղոսն կրել փառաւորապէս։ Դուք կը ստիպէք որ նոքա եւս զարդարին նոյն տիտղոսով. բայց նոքա կը մերժեն։ Սակայն մի թէ դուք եւս պիտի մերժէք, որովհետեւ նոքա կը մերժեն։ Մի թէ դուք եւս կամիք ապերախտ լինիլ, որովհետեւ նոքա յիմար են։

Մի՞ թէ տարակոյս չը կայ, որ թշուառ է այն մարդն, որ կարեւոր բարիք մի կը վայելէ, առանց ցաւելու նոցա վրայ, որոնք իրենց անձն կը զրկեն նոյն բարիքէն։ Երիցս թշուառ է այն մարդն, որոյ երջանկութիւնն այլոց ա-

digitised by A.R.A.R.@

պերջանկութենէն կազմուած է և մի-այն այն բացառիկ շահն ու օգուտն կը սիրէ, յորմէ այլք զրկուած են։ Թշուառ է այն մարդն, բիւրիցս թշուառ, որ կը զրկէ և կը վերաւորէ իւր եղբայրներն իւր կարծեցեալ երջանկութեան համար։ Եվ որ այս եղանակաւ միայն Աստուծոյ որդւոյ տիտղոս կը կրէ, նա չէ և չէր երբէք Աստուծոյ որդի։ Աւելի իւր անձին համար ցաւելու է այնպիսին, քան թէ նոցա, որոց համար չիմացաւ ցաւիլ և վշտանալ։ Այս ցնորքն աւելի վայրագ է և մահաբեր, քան թէ այլոց մոլորութիւնն ու տգիտութիւնը։ Այս իրապէս աղանդաւոր մ'է, տրիոնեայ ընդարձակ և հանրական անուան տակ։ Աւելի լաւ է այն մարդկանց բռնած ընթացքն, որոնք անուն մի կը մերժեն և չեն ընդունիր, քան թէ նոցա ընթացքը, որոնք կընդունին անարգելու համար։

Այս ճշմարտութիւններն հաստատելէն զկնի, կը մնայ մեզ այժմ, սիրելի եղբարք, մի առ մի նշանակել այն խորհրդաւոր նշանաբանին գլխաւոր գիծերը, որով ամենաբարին Աստուած զարդարած է զմարդ իւր սրբոյն համեմատ։ Ու այս կը հրաւիրէ զմեզ Աւաքեալն, երբ կ'աղաղակէ. «Տեսէք որպիսի սէր շնորհեաց մեզ Հայր. զի որդիք Աստուծոյ կոչեսցուք և մեք»։ Արտնենք, սիրելի եղբարք, այս կոչման մէջ Աստուծոյ սիրոյ նշանները։

Ճշմարիտն խօսելով, Արդի կոչումն կամ տիտղոսն ամենայն ինչ կը բացատրէ։ Այս ինքնին կը խօսի ամենն բան։ Այս տիտղոսն մեծագոյն, գոհաբերական և քաղցրագոյն է քան զամենայն տիտղոս, որ կարող է երբէք տրուիլ մեզ։ Այս ամենայն ինչ կը պարունակէ ինչ որ փառաւոր է և ուրախական ուրիշ տիտղոսներու մէջ։ Ահա եմք, որպէս քրիստոնեայք, քահանայութիւն, թագաւորութիւն և ազգ սուրբ, բայց որդիք Աստուծոյ ոչ ապաքէն քահանայ է Աստուծոյ կենդանւոյ և անդամ յաւիտենական և անմահ քաղաքին։ Ոչ մի ժամանակ, ոչ մի տեղ, նաեւ երկնքի մէջ, մենք ուրիշ բան կարող չենք լինիր, եթէ ոչ որդիք Աստուծոյ։ Այն բան այն տիտղոսին մէջ կը պարունակի, ամեն բան այն կոչման մէջ կ'ամփոփի եւ կ'ընկղմի։ Այս է կնիք վերանորոգման և վերահաստատութեան։ Այս է ճշմարիտ անուն աստուածային շնորհաց։ Այս է նոյն իսկ էութիւն շնորհաց։ Այս կը նշանակէ, որ Աստուած տրուած է մարդոյն և մարդն՝ Աստուծոյ։ Այս է բովանդակութիւն Աւետարանի։ Այս է յայտնութիւն երկնից։

Այն մարդ կը հասկնայ, բայց առաւել լաւ ղդալու համար պէտք է վայրկեան մի զննութեան առնուլ Արդի բառի նշանակութիւնը և երկրէն փոխ առնուլ երկնաւոր իրաց չափը, ինչպէս արար Աստուած Դանիելով։ Պէտք է ամփոփել ժողովել այն գորովալիր, բաղդ և ներքին գաղափարներ, զորս կը ծաւալէ իւր շուրջ որդի անուն։ Պէտք է մտքով զննել և տեսնել այն գորովոյ և յարգանաց յարաբերութիւնը, այն վստահ և ընտանեկան կապակցութիւնը, որով որդին կապուած է իւր հօր և մանաւանդ իւր մօր հետ։ Պէտք է տեսնել, մի կողմէն ծնողական անբաւական խնամքն ու հոգացողութիւնը, մշտապատրաստ տքնութիւնն ու հսկողութիւնը, խորհրդներն ու դասերը, խրատներն ու անկեղծ յանդիմանութիւններն, քաջալերութեան հրապոյրն ու խանդաղատանքն, փայփայանաց քաղցրութիւնն ու անու-

digitised by A.R.A.R.@

ջութիւնն։

Պէտք է տեսնել միւս կողմէն որդիական անմեղ և գոգցեա կոյրվատահութիւն, անհոգ անձնատուութիւն, յաճախակի հարցումներն, երկար զրուցատրութիւնքն փափուկ և ազնիւ գորովանքն ու յարգանքը, պատիւն յանուն հօր և ամենասիրելի մօր, յետ ժամանակաց պատիւն 'ի յիշատակ նոցա և յիշողութիւն նոցին իբրեւ աւաջնորդ 'ի բովանդակ կեանս, պէտք է տեսնել այս ամենն և ապա պէտք է ասել ինքնին, որ այս ամենը հազիւ թէ մի անկատար պատկեր են այն ընտանութեան, որ կը հաստատուի Աստուծոյ որդւոյ և երկնաւոր հօր մէջ։ Պէտք է յաւելուլ այս մէն մի գիծերուն ներուն վրայ ամեն բան, որով կը կատարելագործի աստուածային որդիութիւնն և ամբողջին վրայ յաւելուլ ամեն բան, ինչ որ անհամեմատելի կը կացուցանէ զայն։ Եւ յայնժամ միայն կարելի է հասկնալ թէ ինչ առաւելութիւն ունի Աստուծոյ և մարդոյ մէջ այն նոր յարաբերութիւնը, որ հիմնուած է Յիսուսի Քրիստոսի եւ նշանակուած է մեր բնաբանին մէջ։

Կը կրկնեմ վերստին. մեք Աստուծոյ որդիք ենք այն պայմանաւ, որ Աստուած ինքն կամեցած է, որ մենք որդիք լինինք։ Սակայն այս յատկութիւնն լոկ անուն կը լինի և այս որդիութիւնն անիմաստ խօսք, եթէ ինչ որ ճշմարիտ է Աստուած, իրական չը լինի և 'ի մեզ, ըստ բանի Առաքելոյն «Որ է ճշմարտիւ 'ի Նմա և 'ի մեզ»։ Ա. Յովհ. Բ. 8։ Եթէ այս պայմանը նուազի կամ մերժուի, բան մի չը մնար Աստուծոյ կենդանարար շնորհքէն և երկնատուր փրկութենէն։ Վասնզի փրկութիւնը նիւթական և արտաքին գործ չէ։ Փրկութիւնը մեզմէն արտաքոյ չէ, այլ 'ի ներքս 'ի մեզ, փրկութիւնը գործ մ'է, որոյ ճշմարիտ տեղին մեր սիրտն է։ Փրկութիւնը մեր հոգւոյ մի վիճակն կամ կացութիւնն է, և այս պատճառաւ իսկ, մեր ողորմածութեան և շնորհաց գործն եթէ մեր սրտէն օտար է, կարող չէ փրկութեան գործ լինիլ մեզ համար։

(Շարունակելի։)

ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ

(Հարուստակութիւն, տես թիւ Զ։)

Օգուտը-Ի։

Որ վշտանայ 'ի խաչէ կամ 'ի քարէ պարտ է միանգամայն 'ի բաց կալ 'ի քամոտ և 'ի ջերմաբնոյթ կերակրոց, յաղեալ և 'ի ծեծեալ մսոց, 'ի թթու կամ 'ի խակ պտղոց։ Ա.Յլ կերակուր նորա պարտ է լինել յայնպիսեաց, որք ունիցին զզօրութիւն պահելոյ զմէջ և զորովայն հիւանդին արձակ, որպիսի են գանգառ ընտանի, ծնեբեկ, շամեն, եղերդակ, կարսան, փրփրեմ, շողգամ, գետնախնձոր, բոզկ, սոխ և պրաս։ Յայտնի է սոխ, պրաս և կարսոն են կարի վնասաւոր գեղ սոյն հիւանդութեան։

Պատշաճ ըմպելիք սոյն հիւանդի է շիճուկ կաթին, կաթն կովու խառնեալ ընդ կիսաչափ ջրոյ, եփեալ գաբեջուր, ջուր եփեալ որիզոյ, եփուած կարսոնի կամ այլ մեղմ դալարեաց, կտաւատի, բոզգաջի լմանենեանց, և այլն։

digitised by A.R.A.R.@

Լիթէ հիւանդն սովոր է ըմպել զզօրաւոր հեղուկս, կարէ երբեմն ապէս առնուլ զսակաւ ինչ ջին ընդ ջրոյ, որ ունի զզօրութիւն արձակ պահելոյ զմէջս։

Այեղմ կրթութիւն յոյժ հարկաւոր է սոյն հիւանդին. բայց ուժգին շարժումն և վաստակ երբեմն պատճառէ արիւնային միզումն և սաստիկ նուազութիւն։

Խիճ երիկամանց բաղում անգամ անցանէ ընդ միզին, հեծանելով 'ի ձի և նստելով 'ի կառս. բայց որք վշտանան 'ի քարէ, անօգուտ են այսպիսի կրթութիւնք։

Ի սկիզբն նշանաց այս հիւանդութեան եթէ ախտացեալն միտ դիցէ պատշաճ կերակրոց և ըմպելեաց, և փոյթ տարցի չափաւոր կրթութեան, գուցէ խսպառ ողջացի, կամ արգելցէ զարգացումն քարին, յորմէ և ոչ այնչափ վշտանայ։

Դեղ։

Հեղուկ սերմանց վայրի ստեպղան քաղցրացուցեալ զայն մեղրոք, կամ մեղր ընդ փոխանդի, յոյժ օգտաւէտ են սոյն հիւանդութեան։ Նաև եփուած անհաս հատապտղոց խահվէի առեալ յամենայն երեկոյ և առաւօտ իբրեւ ութ կամ տասն օնսաչափ, խառնեալ ընդ այն 10 շիթ քաղցր ոգւոյ բորակի՝ սպիրիտ օֆնիտրի, կարի օգտաւէտ է վասն վարելոյ զհոզային նիւթս ընդ միզին 'ի դուրս։

ԳԼՈՒԽ Է.

Աքիանոլո-ֆոբիան որովայնի։

Այս ախտ առաւելապէս պատահի 'ի գարնան և յաշնան և 'ի ջերմավայրս յամենայն եղանակի։ Նաև այս ախտ կարի հասարակ է 'ի ճախնային երկրի, ուր զկնի ջերմ և չոր եղանակի բաղում անգամ տարածի անդ ախտ տարափոխիկ։

Լուս և կարի ընդունակ են այս ախտի այնոքիկ՝ որք միշտ գիմագրաւ լինին գիշերային օդոյ. և որք բնակին 'ի տեղի ինչ, ուր շնչումն օդոյ չէ ազատ. և ասասի է, զի բաղում անգամ լինի այն մահառիթ 'ի զօրանիստ տեղիս, 'ի բանտի և 'ի հիւանդանոցի։

Պատճառ։

Այս հիւանդութեան հնար է պատճառիլ յայնց ամենից, որ արգելու զարտաշնչութիւնն, կամ ապականէ զհիւթ մարմնոյ։

Նաև 'ի խոնաւ անկողնոյ, 'ի թացեալ զգեստուց, յանբարեխառն կերակրոց և յանառողջ օդոյ պատճառի այս ախտ։

Բայց և բաղում անգամ պատճառի այն 'ի տարափոխիկ ախտէ. վասն որոյ հարկ է զգուշանալ 'ի մերձենալն կամ հետեւելն այսպիսի հիւանդին, զի միայն հոտ հիւանդին բաւական է հաղորդել այլում զայս հիւանդութիւն։

Նշան այսր հիւանդութեան։

Այս ախտ իմանի 'ի սաստիկ լուծելոյ որովայնի յուժգին ցաւոց աղեացն և 'ի շարունակ արտաքս ելանելոյ, զի և մաքրութիւն որովայնին տեսանի փոքր կամ շատ խառն ընդ արեան։

Ի սկսման այս ախտի ըստ հետեւանաց ջերմախոտութեան, ունի յինքն ցրտութիւն, երագութիւն ընդ ջերակաց. սաստիկ ծարաւ, և նոսկանք ստամոքսաց։

Պարտ է զանազանել զայս ախտ

digitised by A.R.A.R.@

յորովայնալուծութենէ և 'ի կոլերա, մօրբոսէ սաստիկ ցաւոք աղեացն և արեամբն ընդ մաքրութեան որովայնին, վասն որոյ զգուշացի զի մի խնամարկութիւն այնց 'ի կիր առցի 'ի սմին, որ ամենեւին անօգուտ է կամ վնասակար։

Ս. գ ո ղ ո ւ թ ի ւ ն։

Զի՞նչ այնչափ հարկաւոր սոյն հիւանդութեան, որչափ մաքրութիւն անձին և տեղւոյն՝ ուր բնակի հիւանդն, որ ոչ միայն նպաստէ հիւանդին յոյժ, այլ և է ապահովութիւն այնոցիկ՝ որք զգուշանան հիւանդին. քանզի յամենայն փոխադրական ախտս առաւելու վտանգն զանցառութեամբ մաքրութեան, որ ունի առաւել վատթարագոյն ներգործութիւն 'ի վերայ սոյն ախտի. վասն որոյ պարտ է ստէպ փոխել զամենայն զգեստս հիւանդին, և զմաքրութիւն որովայնին առժամայն 'ի բաց առնուլ 'ի սենեկէն և ընդ հողով ծածկել։

Պարտ է միշտ խաղացուցանել 'ի սենեակ հիւանդին զոլաբար օդ, և ստէպ սրսկել անդ դքացախ, զհիւթ լիմոնի կամ այլ զօրաւոր հիւթ թթու իրաց։

Զէ պարտ հիւանդին երբէք սրբտաբեկ լինիլ, կամ միանգամայն 'ի բաց դնել դայոյս բժշկութեան. քանզի ոչինչ այնչափ առաւել 'ի վտանգ մահու ձգէ զվոխադրական ախտաւորն, որչափ երկիւղ և կասկած և անյուսութիւն ողջութեան, զի ամենայն այսպիսի վտանգաւոր հիւանդութիւն ունի զբնութիւն լքանելոյ զշորութիւն հիւանդին, և յորժամ յաւելու 'ի նա երկիւղ կամ կասկած անառողջութեան, անհնար է եթէ նա ոչ վտանգեսցի 'ի մահ։

Բարւոք է հիւանդին զգենուլ միշտ զՓքանէլ առ 'ի յորդել զարտաշնչութիւն մարմնոյ. և ամենայն ըզգուշութեամբ 'ի բաց կալ 'ի մսոյ, 'ի ձկանց, և յայնմ ամենայնէ՝ որ ունիցի զբնութիւն նեխելոյ կամ թթուելոյ 'ի ստամոքսի։

Կերակուր նորա իցէ խնձոր եփեալ կաթամբ, խիւս որիզոյ եփեալ ջրով, կաթամբ եփեալ թանձր սագու կամ արարուտ, կաթամբ յօրինեալ կարկանդակ ալեր, արգանակ 'ի մածուցական մասանց մսոյ անասնոց։

Մածուցիկ արգանակն ոչ միայն է պատշաճ կերակուր սոյն հիւանդի, այլ և համարի դող բժշկութեան, եթէ հիւանդութիւնն ոչ է յապականեալ տեսակէ։

Այս մածուցիկ արգանակ պատրաստի այսպէս։ Առնուլ պարտ է զոտսն և զդլուխս ոչխարի, և մաքրեալ զայն 'ի մաղոց խանձելով 'ի հուր կամ մաշկելով, և ապա եփեսցի 'ի չափաւոր ջուր այնչափ մինչեւ թանձրասցի, և ցանեալ 'ի վերայ փոքր ինչ ծենծեալ դարիսոն՝ տացի հիւանդին ուտել ոչ աւելի քան զմի կամ զերկու դրգալս, և յաւուրն երկիցս կամ եռիցս անգամ միայն։

Բայց եթէ հիւանդին անյօժար իցէ յիշեալ արգանակն, արասցի խիւս ալեր կաթամբ, և այս տացի հիւանդին ուտել, որ և այսպէս պատրաստի։ Առեալ զքանի բուռն մի ալեր եփեսցի ջրով, և ապա ածեալ 'ի պատառ ինչ՝ պինդ կապեսցի. թողլով այնպէս յուռթ կամ 'ի տասն ժամս մինչեւ խոպառ ցամաքեսցի 'ի ջրոյ. և առեալ անտի երեք դրգալ բովեսցի և եփեալ կաթամբ արասցի թանձր խիւս և տացի հիւանդին ուտել շաքարով կամ առանց շաքարի։ Այլ եթէ հիւանդն շարունակեսցէ զայս, զի՞նչ այլ

digitised by A.R.A.R.@

օգտաւէտ կերակուր վասն նորա քան զայս խիւս։

Յապականեալ որովայնաբնութեան՝ հիւանդն կարէ ազատօրէն ուտել զամենայն տեսակ հասուն նացեալ պտղոց, եթէ եփեալ ջրով կամ կաթամբ, և եթէ առանց եփելոյ. զի հասուն նացեալ պտուղք, կամ՝ն և մեղմ կրթութիւն՝ բաղում անգամ բժշկեն զհիւանդն։

Պատշաճ ըմպելիք սոյն հիւանդի է շիճուկ կաթին, զոր եթէ հիւանդն շարունակ՝ի կիր առցէ վասն ըմպելոյ և գրեխի անկասկած այսու միայն բժշկեսցի։

Իսկ եթէ ոչ գտանիցի շիճուկ կաթին, կարէ փոխանակ այնորիկ առնուլ եփեալ ջուր մաքրեալ գարուոյ ընդ ֆրիմպարպարի, կամ՝ եփուած գարուոյն Ռամրհնդոյ, յառաջնոյն երկու օնս և՝ ի վերջնոյն մի օնս ընդ կէս սրուակ ջրոյ։ Նաեւ ջուր փոխանդի, կամ՝ սառնացուցեալ ջերմ ջուր, կամ՝ միլ, թէյ, և այլն։

Ողջացեալն յայսմ հիւանդութենէ կարի ենթակայ է կրկնութեան, եթէ ոչ զգուշասցի. վասն որոյ հարկ է նմա առ ժամանակ մի ամենայն արթնութիւն մտադիր լինել ուտելեաց, և խսպառ՝ի բաց կացցէ յամենայն ոգելից ըմպելեաց. միայն երբեմն կարէ առնուլ բաժակ մի ընտիր գինւոյ. այլ բնաւ մի գարեջուր, այսինքն Բիրա։ Նաեւ պարտ է պտուղաստ կալ՝ի մրսոյ և՝ ձկանց. միայն կերակուր նորա գլխաւորապէս լիցին բանջարք և կաթն։ Փոյթ տարցի առնել միշտ կանոնաւոր և մեղմ կրթութիւնս, և եթէ հնար իցէ՝ բնակեսցի միշտ արտաքոյ քաղաքին. և կրթութիւնն իցէ հեծանելով՝ի ձի կամ նստելով՝ի կառս. և յաւուրն երկիցս առցէ ստամոքսային դառն դեղորայս կամ հեղուկս յառաւօտու և յերեկոյին։ Նաեւ մեծաւ զգուշութեամբ պարտ է պահել զանձն մաքուր յամենայն աղտեղի և քրտնաթոր հանդերձից. պատրաստ կալ անասնային մսով կերակրոց, ուտել զհասուն նացեալ պտուղս որչափ կարէ և յօժարի, ընդ նմին և զմեղմ բանջարեղէնս կաթամբ կամ՝ ջրով եփեալ. զգուշասցի իսկ՝ի գիշերային օդոյ, և՝ ի վատ հոտոյ, յատկապէս՝ի հոտոյ նեխեալ անասնային գիշոյ։

Դեղ։

Ի յերեւելի նշանաց հիւանդութեանս՝ պարտ է առ ժամայն առնուլ փսխողական և լուծողական դեղս և քրտնաբեր հեղուկս, զի այլ ամենայն դեղ՝ի զուր է և անօգուտ։

ԳԼՈՒԽ Ը.

Գլխացաւոցն։

Այս ցաւ յառաջ գայ՝ի զանազան պատճառաց, յորոց յիշեսցուք մեք և սոսա զայնոսիկ, որք ստէպ պատահին մեզ, և ունին զաստիճ ներգործութիւն ինքեանս։

Ցաւ գլխոյ է որ միանգամայն լինի, է որ մասամբ միայն, է որ ներքին և է որ արտաքին, է որ բնիկ և է որ պատահական։

Յորժամ գլխացաւ պատճառի՝ի մաղձային բնութենէ, ցաւն լինի ուժգին և բաղխողական ընդ զգալի ջերմանն վշտացեալ մասին։

Այլ յորժամ է այն՝ի մաղասային բնութենէ, հիւանդն զգայ թմբրական սաստիկ ցաւ և սառնութիւն վշտացեալ մասին։ Յայսպիսի գլխացաւս երբեմն՝ի սաստկութենէ ցա-

digitised by A.R.A.R.@

ւոյն յիմարանայ մարդ, և չկարէ բնաւ առնել կամ գործել ինչ։

Պատճառ։

Որ ինչ արգելու զշրջան արեան առ անօթ գլխոյն, պատճառէ զգլխացաւ։ Այս, բազում անգամ գլխացաւն պատճառի յարգելմանէ սովորական արտաթորման, այսինքն յարենէ քթի, քրտանց ոտից, արեան թքթից, և այլն. նաեւ յառաստութենէ արեան 'ի վերս ելեալ 'ի գլուխն, որ բազում անգամ պատահի 'ի ցրտութենէ, կամ ընդ երկար 'ի վայր կախելոյ զգլուխն. և կամ որ արգելու զդարձ արեան 'ի գլխոյ, և այս պատահի ընդ երկար խոտորնակի հայելով առ առարկայ ինչ։ Ի պինդ կապանաց պարանոցին և 'ի նոր սեղմիչ գլխարկէ։

Յորժամ գլխացաւն պատճառի յարգելմանէ արտաթորման քթոյն, հիւանդն զգայ զցաւ յառաջս գլխոյն և այնչափ սաստիկ, մինչ անհնար լինի նմա բարձրացուցանել 'ի վերս ըզգլուխ իւր։ Այս յորժամ պատճառի այն 'ի կիզղական թարախէ կամ 'ի վալաշոտական ախտէ, ցաւ գլխոյն է 'ի գագաթն։

Կողմնացաւ գլխոյ պատճառի յանմարսութենէ կամ 'ի դատարկութենէ ստամքսայ։

Ի և գլխացաւ, որ է հաստատուն անընդհատ կարի սաստիկ և անտանելի, զի պատճառէ անհնարին թուլութիւն, լքումն ոգւոյ և մտաց, հատանէ զնինջ, կորուստնէ զախորժակս, բերէ զզգայոյ գլխոյ, նսեմութիւն աչաց, շառաչիւն ականջաց, կծկումն ձեռաց և ոտից, երբեմն փսխումն, պնդութիւն որովայնի, և սաստիկ ցրտութիւն անդամոց։

Պատահական գլխացաւ պատճառի 'ի շարունակ ներքին ջերմանէ, կամ 'ի քառօրեայ տենդոյ, և կամ յախտէ արգանդի և ախոնդանաց։

Յորժամ ընդ գլխացաւութեան է սաստիկ ջերմն կամ գունաթափ մեզ կամ ընդ սաստիկ գլխացաւութեան է անհնարին ցրտութիւն, է անյաջող նշանակ. քանզի այսպիսի գլխացաւութիւնն յորժամ երկարէ, բազում անգամ պատճառէ այն կուրութիւն, խլութիւն, պտոյտ գլխոյ, կաթուած, անդամագօսութիւն կամ վերնատուն։

Օգուտ։

Յայսմ հիւանդութեան պարտ է բոլորովին հետեւել զսովարար կերակրոց. քանզի կերակրոց սոյն հիւանդի պարտ է լինիլ յայնպիսի մեղմ իրաց, որ ունիցի զզօրութիւն բառնալոյ ըզկծուութիւն կամ զբարկութիւն հիւթոց մարմնոյ, և պահեսցէ զորովայնն միշտ լոյծ, որպիսի են կաճամբ եփեալ խնձոր, շմեն, շողգամ, ստեպղին, կաղամբ, դդում, բողկ, սագուս, արարուտ, որիզ, մաքրեալ գարի, և այլն։ Այս ըմպելիք նորա պարտ է լինիլ մեղմաբնոյթ հեղուկս, այսինքն եփեալ գարեջուր, քամուած մեղմ դալարեաց, եփուած քրտնաբեր փայտից։

Օրան և զբրունս պարտ է պահել միշտ ջերմ և ստէպ դնել 'ի գաղջ ջուր, կնտել զգլուխն և լուանալ միշտ ցուրտ ջրով և քացախով, պահել զանձն միշտ ուղղորդ, և չդնել զգլուխն 'ի կարի ցած բարձի վրայ։

Յորժամ գլխացաւն պատճառի յառաստութենէ արեան կամ 'ի ջերմ մաղձային խառնուածոյ, պարտ է 'ի կոկորդէ հիւանդին արիւն առնել, և ըստ ստիպման հարկին կրկնել զայն.

digitised by A.R.A.R.@

կամ ձգել զքանի հատ տղբուկս 'ի քունն կամ 'ի յետուստ ականջսյն, կամ ձգել խարանադեղ սպեղանի 'ի յետուստ պարանոցին կամ ականջացն, և կամ յայն տեղն, ուր ցաւի։ Եւ եթէ հարկաւորի, պարտ է ձգել սպեղանի 'ի վերայ բոլոր գլխոյն. եւ լոյծ պահել զորովայնն մեղմ դեղորէիւք։

Գլխացաւն պատճառեալ յառաջութենէ ապականեալ հիւթոց, և դադարեալ 'ի թաղանթի կամ 'ի մաշկի, որ բերէ սաստիկ և անընդհատ գլխացաւ, որ եթէ արիւն առնելով և մեղմ դեղովք ոչ անցանէ, հարկ է տալ հիւանդին զօրաւոր լուծողական դեղս, ձգել 'ի վերայ բոլոր գլխոյն խարանադեղս, և 'ի միջոց մի զյեստուստ պարանոցին բաց պահել, մինչեւ անցցէ գլխացաւն։

Յորժամ գլխացաւն պատճառի յարգելմանէ արտաթորման քթոյն, հարկ է ստէպ հոտոտել զյեղեղուկ աղս, այսինքն՝ օ. ՊԸ ԼՈ, առնուլ ըստ քթախոտ կամ դեղուն և կամ զայլ գրգռիչս քթոյ, մինչեւ դարձցի այն առ առաջին ընթացս իւր։

Յաւ կիսոյ գլխոյն, յատկապէս յորժամ իցէ այն կանոնաւոր, պատճառի 'ի լիութենէ ստամոքսայ, որոյ վասն հարկ է տալ հիւանդին մեղմ փսխողական և լուծողական դեղս, և 'ի գիշերի կապել 'ի ճակատն զկտոր մի ֆլանելայ։

Յորժամ գլխացաւն պատճառի յապականեալ հիւթոց բորոտութեան քոսի և վավաշոտական ախտի, զկնի գուն գործելոյ պատշաճ արտաթորման թարախայն, պարտ է տալ հիւանդին ըմպել եփուած փայտից, սարսափելոյ ընդ հեղուկս չամշոյ։

Յորժամ գլխացաւն է անտանելի և վտանգաւոր, պարտ է հիւանդին առնուլ զլիմբացուցիչ դեղս։ Օ. 'ի զկնի տալոյ նմա զպատշաճ մաքրողական դեղորայս, ասպա շփել պարտ է զվշտացեալ տեղին Բալսամբոպոյ անուշ դինոյ, որ և կարէ առնուլ 20 կաթիլս լաուդանում ընդ ըմպանակ մի վալերիան թէյի, յաւուրն երկիցս կամ երիցս անգամ։

Յայսմ սաստիկ գլխացաւութեան պարտ է հիւանդին շարունակ 'ի կիր առնուլ զպատշաճ մեղմ դեղորայս հանդերձ հետեւելով թմբրական դեղոց։

Եթէ չիցէ պատշաճ հիւանդին արիւն առնել, հարկ է նմա զոտն և զարունս ստէպ դնել 'ի գաղջ ջուր, կամ 'ի կիր առնուլ զսպեղանի մանանեայ կամ սերմանց բողկի 'ի յետուստ պարանոցին։ Այսպէս առնի և 'ի գլխացաւութեան որ պատճառի 'ի հիւթոց յօդացաւութեան։

Այլ գլխացաւ յորժամ պատճառի 'ի սաստիկ ջերմութենէ արեւու, 'ի վաստակոց կամ 'ի կրթութենէ, պարտ է հիւանդին առնուլ զմեղմ դեղորայս, զովարար ըմպելիս, և աղային ըմպելիս ընդ ինոյ՝ այսինքն ոգի բորակի։

ԳԼՈՒԽ Թ.

Աչացաւութեան։

Աչացաւութեան հնար է պատճառիլ յարտաքին վնասուց, այսինքն 'ի շնչմանէ սաստիկ հողմոց, 'ի կիզմանէ արեւու, 'ի յաճախ տրորելոց մատամբ զաչսն, և այլն. նաեւ 'ի փոշւոյ, յանշէնչ կրոյ, և 'ի ժժմանց անկելոց յաչսն։

Եւ բորբոքումն աչաց բաղումն գամ պատճառի յարգելմանէ սովորական արտաթորման, այսինքն 'ի բու-

digitised by A.R.A.R.@

ժելոյ հնացեալ վիրայ, 'ի խափանմանէ խարանաց, 'ի ճնշելոյ առաւօտեան մեղմ քրտանց մարմնոյ կամ ոտից, յընդերկար դիմելոյ առ գիշերային օդ, յատկապէս առ ցուրտ հողմ հիւսիսային, կամ առ այլ ինչ, որ յանկարծ զսպէ զարտաշնչութիւնն յորժամ մարմինն դեռ ջերմ է 'ի կրթութենէ իմիք կամ 'ի վաստակոց։

Այլ և պատճառի այն յերկար հայեցողութենէ 'ի վերայ ձեան կամ սպիտակ իրաց, արեգական, բոցոյ կամ փայլուն առարկայի և յանկարծ 'ի մը թուութենէ դիմելոյ առ լոյս։

Ոչինչ այնչափ առաւել պատճառէ բորբոքմանց աչաց, որչափ արթնութիւն գիշերային և յաճախ ընթեռնուլն և գրելն 'ի լոյս ճրագի։

Նոյնպէս աչացաւն բաղում անգամ պատճառի յրմպելոյ զօրաւոր և բորբոքիչ հեղուկս, 'ի վավաշուտական ախտէ, 'ի մռմռացուցիչ ծխոյ հանքային նիւթոց, 'ի ծխոյ ճարակաց հրոյ, 'ի տուփական աղտեղութենէ, յաղտալից իլոց կամ յօդացաւութեան։

Երբեմն եւս պատճառի այն 'ի վերնասուէ արտեւանաց կախեալ յոչնոն. է եւս որ պատճառի 'ի տարափոխիկ ախտէ աչացաւութեան, 'ի խոնաւ օդոյ, 'ի խոնաւ բնակութենէ, 'ի հարբուխէ, 'ի պիտակէ, 'ի վարդախտէ, յատկապէս յերեխայսն։

Նշանք այս ցաւոց։

Բորբոքումն աչաց զգայ սաստիկ ցաւօք, տագնամբ, լցեալ արեամբ կամ կարմրութեամբ և ուռուցմամբ։ Հիւանդն չկարէ հայիլ առ լոյս, և զգայ երբեմն սաստիկ խայթիչ ցաւ, որպէս թէ փշոք ծակիցեն զաչս նորա։ Աչք նորա լի են միշտ հարբուխային կիզիչ ջրով. զարկ բազկայն ըստ չափու իրիք ջերմախտութեան հարկանի սաստիկ, և յորժամ բորբոքումն միոյ ականն անցանէ առ միւսն, է անյաջող նշան։

Օգուտ։

Պարտ է սոյն հիւանդի պատրաստ կալ 'ի կերակրոյ որ են բնութեամբ ջերմ կամ դրդուիչ արեան. զի կերակուր նորա գլխաւորապէս կայանայ 'ի մեղմ դալարիս, յանգոր արգանակ և 'ի փոխինդս։

Նոյնպէս ընդ նորա պարտ է լինիլ ջուր եփեալ գարեայ կամ որիզոյ. շնաձուկ կաթին, թոյլ թէյ, կամոմիլ, կաթն և այլ այսպիսիք։

Մենեակ նորա պարտ է լինիլ մթին, բայց մի՛ խափանեսցի այն 'ի յօդոյ. բարեաւք է և հովանաւորել զաչսն նուրբ և թեթեւ կապտագոյն կամ կանաչագոյն ծածկութիւ, այլ զգուշասցի զի մի՛ ճնշեսցէ այն 'ի վերայ աչացն։

Նոյնպէս զգուշասցի 'ի հայիլ առ լոյս ճրագի, հրոյ և այլ փայլուն իրաց. և միանգամայն 'ի բաց կացցէ 'ի ծխելոյ զծխախոտ, 'ի դեղընչոյ, եւ յայնմ ամենայնէ, որ պատճառեսցէ զփռնգումն, զհազ և զփոսումն։

Նոյնպէս և պարտ է հիւանդին ամենայն զգուշութեամբ ջանալ պահել զինքն խաղաղ և հանգիստ կալ առանց բարկութեան, սրտնեղութեան կամ յուսահատութեան. և որչափ հնար է՝ դուն գործեսցէ 'ի ննջել։

Դեղ։

Աչացաւութիւնն է մի յայնոցիկ հիւանդութեանց, որ սղալ կիրառութեամբ արտաքին դեղոցն վնասի յոյժ։ Զատն որոյ հարկ է ամե-

digitised by A.R.A.R.@

նայնիւ զգուշանալ 'ի կիրառութենէ այնպիսեաց, եթէ իցէ ջուր, եթէ օծանելի և եթէ այլ անպատշաճ դեղ ինչ։

Այլ 'ի սաստիկ բորբոքման աչաց բարեգոյն միջոց բժշկութեան է նախ արիւն առնելն 'ի կոկորդէ հիւանդին, կամ 'ի պարանոցէ և կամ 'ի բազկաց։

Բարւոք է և 'ի կիր առնուլ զարբ ջուկս, յորոց 6 կամ 8 հատ ձգելով 'ի յօնսն կամ 'ի ներքոյ աչաց. որ եթէ հարկաւորի, հարկ է կրկնել զերկուսն եւս, եթէ արիւն առնելն և եթէ տզրուկ ձգելն։

Չէ պարտ զանց առնել տալ հիւանդին զմեղմ լուծողական դեղս, միշտ բաց պահելով զորովային նորա։ Ուստի կարէ հիւանդն յերկուս կամ յերիս աւուրս անգամ մի աղատօրէն առնուլ սակաւ ինչ և աղ գլաղերոյ և դրնմարդար, կամ եփուած փամրենդոյ։

Իւ եթէ այսոքիկ ոչ իցեն այնչափ օգտակար, կամ հիւանդն ոչ հաճեսցի ըմպել, բարւոք է սմա առնուլ բոբրբ և նիպր կամ այլ մեղմ լուծողական դեղս, և զկնի ըմպեսցէ յաճախ փոխնդաջուրս, թէյի, շիճուկ կաթին, կամ այլ և այլ հեղուկս. նաև 'ի ժամ ննջման հարկ է նմա դնել զոտս և զսրունս 'ի գաղջ ջուր. և 'ի շաբաթն երկու անգամ կնդել զգբլուխն և ցուրտ ջրով լուանալ։

Այլ նոքա որք ընդունակք են ըստէպ կրկնման աչացաւութեան, բարւոք է նոցա բանալ խարանս յերկոսին բազուկսն, եւ զգուշանալ զի միշտ բաց մնասցեն. և հետեւել արեանառութեան և լուծողական դեղոց յամենայն գարնան և աշնան եղանակի և կեալ կանոնաւոր կեցութեամբ, 'ի բաց կալով յամենայն ջերմաբնոյթ կերակրոց և 'ի զօրաւոր ըմպելեաց, յատկապէս 'ի դիշերային օդոյ և 'ի աքնութենէ ուսման։

Կիսախարշ ձու, կաթն, սեր, կարագ, հաց, մեղմ դալից և հասուցնացեալ պատուղք կաթամբ եփեալ, են պատշաճ ուտելիք այսպիսեաց. և ցուրտ ջուր, շաքարաջուր, շիճուկ կաթին, հանքաջուր՝ «Էլվաթ. օշարակ նշոյ, նարնջի ծաղկանի, թոյլ թէյ, խահվէ և այլն, են պատշաճ ըմպելիք։

ԳԼՈՒԽ Ժ.

ՇՆՉԱՐԳԵԼՈՒԹԻՒՆ։

Շնչարգելութիւնն է ցաւ թոքոյ, կամ ախտ ինչ փողոց, որոց անցքն վատթար հիւթով խափանի, ուստի լինի արգելումն շնչոյ։

Այս ախտ բաժանի 'ի խռնաւ և 'ի չոր, կամ 'ի հիւթային և 'ի ջղային շնչարգելութիւն։

Առաջինն իմանի մաքրութեամբ կրծոց, իսկ վերջինն 'ի չոր և 'ի ցամաք կրծոց, յորմէ բուռն հաղալով ելանէ միայն փոքր ինչ կարծր մաղաս։

Պատճառ։

Շնչարգելութիւնն է երբեմն ժառանգական, երբեմն պատահական, երբեմն եւս յառաջ գայ 'ի վատ ձեւացեալ կրծոց։

Կատեւ բազում անգամ պատճառի այս ախտ 'ի հանքային գոլորշոյ կամ 'ի ծխոյ մտեալ 'ի թոքն, 'ի սաստիկ կրթութենէ, 'ի յուժգին վազելոյ, յարգելմանէ սովորեալ արտաթորման՝ այսինքն դաշտանի, յետադարձման յօդացաւութեան, շարաւալից պալարաց, ծաղկի, վարդախտի, բորոյ, քոսի, և այլն։

Իւս և պատճառի այն 'ի սաստիկ տարտամութենէ մտաց, 'ի յանկարծ

ծակի երկիւղէ, 'ի հարբզնային հաղէ, 'ի հողմաշունչ տեղւոջէ՝ ընչեալ առ թիկամբն, յարգելմանէ շրջանի արեան կամ օդոյ առ թոքն։

Նշան այս հիւանդութեան։

Նշան ընչարգելութեան է փոյթ ընդ փոյթ դժուարին ընչելն. որ կատարի հեւալով կամ թօսելով. և երբեմն այնքան ծանրանայ ընչելն, որով հիւանդն կարծի թէ է 'ի վտանգի հեղձման։

Այս տաժանելի հիւանդութիւն բաղումանգամ պատահի 'ի դիմելոյ առընդդէմ արեւելեան ցուրտ հողմոց, 'ի շրջելոյ 'ի միգապատ եղանակի, 'ի թոռութենէ զգեստուց մաշուցեալ ընդ մարմնին, 'ի կանգնելոյ երկար 'ի վերայ խոնաւուտ գետնի, և 'ի դժուարամարս կերակրոց որք են խմորուն կարկանդակ, խորովեալ պանիր, ապուտ խոզի, միսալ և աղեալ մի օր։

Այս տաժանակիր հիւանդութիւն հատանի քուն հիւանդին, կերկերի ձայնն, հազայ։ Ընդ որոց և է ձգուտումն հողմոց զգացութիւն ծանրութիւն 'ի վերայ լանջաց, ջերմութիւն ջերմն, ցաւ գլխոյ, սաստիկ ճնջումն կրծոյ. բաղխումն սրտի սաստիկ նըւաղութիւն մաջումն մարմնոյ։

Այս դժնդակ ախտ զրեթէ առաւել սաստկանայ 'ի գիշերի. զի ըմբռնի զհիւանդն երբեմն առաջ եւ երբեմն յետ կէս գիշերոյն մինչեւ ցլուսանալ աւուրն, և երբեմն այնչափ սաստիկ, որով կարծէ հիւանդն ընչասպառի։

Օգուտ։

Կերակուր այս հիւանդի պարտ է լինիլ թեթեւ և դիւրամարս. խարշեալ միս գառան կամ որթոյ, որ և պարտ է 'ի բաց կալ 'ի քամոտ և 'ի դժուարամարս կերակրոց և 'ի զօրաւոր ըմպելեաց, յատկապէս 'ի դարեջրոյ, այն է թէր։

Սպիտակ հաց, կաթամբ և հացիւ յօրինեալ կարկանդակ, արգանակ վառեկի կամ նիհար մսոյ անասնոյ, խարշեալ կամ խորովեալ ձագ աղաւնոյ, հասունացեալ պտուղք և մեղմ դալարիք կաթամբ եփեալ, են պատշաճ ուտելիք սոյն հիւանդի։

Նաեւ ընթրիս սոյն հիւանդի պարտ է լինիլ կարի թեթեւ և դիւրամարս. և եթէ հնար է, բարւոք է նմա միանգամայն 'ի բաց կալ յընթրեաց. քանզի լիութիւն ստամոքսաց յաւելու զսաստկութիւն ախտիս։

Հարկ է և միշտ բաց պահել զոբովայն հիւանդին, ագանիլ զջերմարար զգեստս յատկապէս 'ի ձմեռան և յանձրեւային եղանակի։ Զ'ի ամենայն անառողջութիւն կրծոց հնար է անցուցանել պահելով զոտն ջերմ և քրտնացուցանել զանձն ագանելով զՓլանելա և զհաստ գուլպայս և կօշիկս։

(Շարունակութիւն)

ԳՐՈՒԹԻՒՆ

Հանգուցեալ Գաբրիել Պապրիարի Ս. Ամուրայ առ Կարբեցի Տ. Յովհաննէս կաթողիկոս Ս. Էջմիածնի, յորոմ պատմին անցք բռնաբարութիւն Ս. Համբարձման տեղւոյն Յիսուսի Քրիստոսի 'ի յեռաց Մէաբանութիւն Հայոց Ս. Լուսաւորչի։

Բարեփառ Հայրութիւն ձեր 'ի 1837, Ապրիլ 10 փրկչական թիւն, որդիութեան և խաղաղութեան ոգւով յատուկ կոնդակ առաքեալ էիր

digitised by A.R.A.R.@

առ մեզ պատուիրելով՝ ի նմին սէր ընդ այլազան քրիստոնեայ ազգաց, յոր թէ պէտ անչափ խրախուսեալ գրեցաք՝ ի 1838 թիւ զպատասխանին, բայց այժմ՝ ի խելամուտ առնել զձեր Արքուութիւն զանմեղութիւն հայազգի Ս. Աթոռոյս վանականացն՝ ի պատճառս յայս սուրբագրեալ անհեթեթ դարձուածոյն յերեսաց նախանձաւոր կրից նոյն վերոյիշեալ ազգացն, արժան դատեցաք գրել զայս նամակ ամենայն ճշմարտութեամբ։

Երիսատոսի Փրկչին մերոյ ոմանց ուսանց Տեսրինական տեղեաց, որպէս նոյն իւրաքանչիւր ազգքն տիրեալ են ինքեանց սեպհական իբրեւ հայրենեաց, նոյնպէս և մեր նախնիք սրբոյնի հաստատուն երեքին հին հրովարտակք Օսմանեան տէրութեանն ստացեալ են՝ ի բնէ անտի ինքեանց սեպհական զի Ս. Համբարձման լեառն եղեալ ոտնակոխ տեղին Տեառն մերոյ, և շինեալ են անդ սեղան պատարագամատոյց և բնակարան միաբանից. բայց՝ ի պատճառս բռնաւորութեան այսր կողմանց՝ նոյն շինուածն մեր ապրստամբ Արաբացիքն հետզհետէ քայքայելոյն զկնի՝ միայն զմիջին ոտնակոխ մատուռն Թողին. և յամենայն ժամ, յամենայն ազգաց ուխտաւորաց դրրամն առեալ, ապա Թողուին մտանել՝ ի մատուռն և երկիրպագանել տեղւոյն. և յահէ նոցա՝ ի տարին հազիւ երկու անգամ մեք և Յոյնք և Խպտիքք և Ասորիք՝ ի զքնակայսն վանաւ պատարագելոյ համարձակեաք՝ ի հարիւրուութսուն ամաց անտի մինչեւ ցայսօր։ Իսկ Լատինք, ըստ որում ունին Թագաւորութիւն, նոքա՝ ի ձեռն դեսպանաց որ՝ ի Պոլիս, հրաման մի առեալ են յարքունուստ՝ ի տարին մի անգամ և եթ պատարագելոյ յիսկ մատրանն ոտնակոխ Սուրբ Տեղւոյն այս

ուր Համբարձման տօնի իւրեանց, և յայլ աւուրս բոլոր տարւոյն Արաբացիք զնոյն մատուռն և զբնակատեղիսն միշտ գրեթէ արարեալ էին ինքեանց իբրեւ տեղի մակաղատեղ խաշանց որպէս յաւերակ անապատի։

Այլ սակայն յայս միջոցս՝ ողորմութեամբն Աստուծոյ՝ ի տեսանել ամենեցուն Երիսատոսէից զերեսս հանգստեան բոլորովին ազատ՝ ի բռնութեանց Արաբացւոց, ըստ որում սեպհական մեր էր շինուածքն և բնակութիւնն սուրբ տեղւոյն՝ ի բնէ անտի, վերոյշեալ հրովարտակն՝ ի Պոլիս ցուցեալ ողորմած արդարադատ տէրութեանն Օսմանեան, և՝ ի նորին՝ ի գտանիլն զզայսոսն նոյն Ֆէրմանից՝ ի հարիւրուութսուն ամ յառաջ եղեալ հնագոյն արքունական մատեանս իւր, ետ մեզ ուրախութեամբ նորոգ Ֆէրման՝ ի շինել զսեղան և բնակարանս վասն միաբանութեան և բնակիլ անդ և պատարագել և փառաւորել զսուրբ տեղին Երիսատոսի։ Այսու Ֆէրմանաւ՝ ի դատաստանէ քաղաքիս Երուսաղէմի հրաման առեալ շինեցաք՝ ի 1836. յունիս 23, սեղան՝ ի ներքս Սուրբ մատրան և արտաքոյ մատրան զերկոսին քարուկիր սենեակս և երեք սենեկայ տեղիս եւս ըստ օրինի՝ դատարանի քաղաքիս հէօճէթով և բաղմագումար դրամոց գնովք յայլազգեաց գնեալ արտաքոյ ջրջապատ պարսպին, ի վերայ այնորիկ տեղւոյ քարուկիր երեք սենեակ շինեցաք. յայս ամենայն քանի մի հարիւրաւոր քսակս ծախելով՝ ի սոյն աղքատութեան մերում, մինչև յօրական ապրուստից մերոց անգամ պակասեցուցանելով, որպէս զի՝ սուրբ տեղին զերծցի յանարգութենէ և յանմաքրութենէ, և մնասցէ պայծառ փառաւոր իբրեւ տաճար Աստուծոյ. զոր պաշտեալ և փառաւորեալ միա-

digitised by A.R.A.R.@

բանք մեր ցայդ և ցերեկ ժամերգութեամբք, երկիցս և երիցս միշտ յամենայն շաբաթուոջ պատարագէին, և երբեմն եւս շարունակ յամենայն օր 'ի շաբաթն բոլոր, և միւս քրիստոնեայ եղբայր ազգքն եւս զոսկորութիւնսն իւրեանց եկեալ ուրախ ուրախ կատարէին ամենայն հանդիսաւորութեամբ, այսինքն՝ Լատին 'ի տաբուոջ մի անգամ պատարագէր, և Յոյն և Խպտիքքն և Սորիքն երկու անգամ. և այսպէս պատուեալ և մեծարեալ 'ի միաբանութենէ սրբոյ Թորոս գնային և ուխտաւորք նոցա արձակ համարձակ եկեալ զուխտս և զերկրպագութիւն յորում պահու և իցէ՝ կատարէին և դառնային Երուսաղէմ, զի դրունք բաց՝ և միաբանք մեր որ անդ՝ պատրաստ մնային միշտ 'ի յարգել զեկեալսն ամենայն։ Ի վերայ այսր ամենայնի ըստ մեզ 'ի միջի մերում առաւել հաճ և հաւան էաք եթէ նոքին Լատին և Յոյն ազգքն եւս, մեք որ 'ի յարեւմտեան կողմն սուրբ մատրանն շինեցաք, ինքեանք եւս հրաման առեալ յարքայէն յարեւելեան կամ 'ի հիւսիսակողմն շինեսցեն. իսկ սոքա այնպիսի բարեմտութեան չհետեւելոյն զկնի, յանցեալ տարի լցեալ ոգւով նախանձու եւ եղբայրասիրութեան, գաղտագողի ոմանք կարգաւորք 'ի նոցունց գնացին 'ի Պոլիս։ Լատին կարգաւորքն խաբեալ զյարգոյ դեսպանն իւրեանց ասելով՝ Հայք յորմէ հետէ շինեցին, արգելս տան մերոց սովորական արարողութեանց. յոյր ձեռն 'ի բարձր դրանէ Օսմանեան արքային հրովարտակ հանեալ բերին Երուսաղէմ, ուր 'ի դատարանն ընթեռնուլ տուեալ ստիպէին աւագանւոյ քաղաքիս հրամայել ինքեանց զշինուածն անգամ փոխել. և Յոյն կարգաւորք ոմանք եւս 'ի մէջ դատարանին ձայնակցեալ նոցա, ջարիմաց հնարիւք բարձրաձայնս աղաղակէին լցեալ բարկութեան ստահօսութեամբ և նախանձու ասելով թէ՝ այն տեղին Ջամի է եւ աղօթարան Մայրագեաց, Հայք վասն էր շինեցին անդ շինութիւն և սեղան։ Սակայն այս բան անիրաւ նախանձու խօսքին նոցա յայտնի լինելոյն վասն առաջի բոլոր պրպտգի աւագանեաց քաղաքիս Երուսաղէմի, ոչ՝ զոր ունկնդիր եղեւ նոցին սոյն չարամտութեան, ուստի դատաւորն օրինագէտ արդարադատ գտնելով, եհարց Լատին կարգաւորաց թէ՝ Հայք յետ շինելոյ զնոյն աւերակ անապատ տեղին արգելք ինչ եղեն ձեր սովորութեանն։ Նոքա անդանօր առ ամօթոյ առաջի բազմութեանն չկարացին զլանալ, խոստովան եղեն թէ՝ ոչ. ուրեմն, ասաց, չունիք ինչ իրաւունս 'ի վերայ նոցա. նա մանաւանդ սոյն ձեր բերեալ հրովարտակն ոչ տայ հրաման փոխելոյ՝ այլ հրամայէ Հայոց զի մի տայցեն արգելս Լատինաց սովորութեանն։ Սոքա յայնժամ այսպէս ամօթապարտ լեալ գնացին 'ի դատարանէն։

Եւ Յոյն կարգաւորքն եւս զկնի քանի մի ամսոց 'ի Պոլիս 'ի ձեռն պատրիարքի իւրեանց զանազան ստայոդ բանիւք ազդ արարեալ առ տէրութիւնն, եռուն աւերել 'ի բարձր դրանն արքունի եղեալ զղայտան մեր Նորոգ Ֆէրմանի Ս. Համբարձման, և յայն միտս Ֆէրման մի առեալ յարքայէն՝ բերին Երուսաղէմ. բայց ոչ գոյր գրեալ յայնմ եւս հրաման ինչ աւերելոյ և փոխելոյ շինուածոց մերոց և Սրբոյ սեղանոյն, թէպէտ և աշխատեցան փոխել և վերասել շինուածոց, այլ ոչ կարացին։

Իսկ յայս ամ զանխուլ 'ի մէնջ նոյն Լատին կարգաւորք վերստին գնացեալ

digitised by A.R.A.R.@

դեսպանին Թրանսայու, անհիմն բանիւ շարայարեալ արդ տալ եւուն առ տեր՝ Թիւնն Օսմանեան, և ձանձրացուցեալ զպատուական գլուխ նորա, առեալ բերին 'ի նմանէ բակելոյ հրովարտակ, զոր 'ի Սեպտեմբերի 11 ինքեանք, ձեռաք իւրեանց հանդերձ հասարակ ժողովրդովք Լատին և Յոյն ազգաց, խառն բազմութեամբ յարձակեալ 'ի լեառն Ս. Համբարձման 'ի վերայ սեղանոյն և ամենայն նորոգ քարուկիր շինուածոց մերոց քակեցին ցիր և ցան արարեալ զքարինսն 'ի մէջ երկուց աւուրց՝ կացուցին զամենայն հիմնայատակ։ Ընդ էր տեսանել և լսել նախատինս և հայհոյանս Ազգեաց և 'ի Հրէից, որք ասէին յերեսս նոցա անգամ յոլովք 'ի բազմոց հայեցողաց։ Հայք զտեղին Աստուծոյ իւրեանց շինեցին 'ի փառս սուրբ անուան նորա, դուք Յոյն և Լատին կարգաւորքդ աւերեցիք և փլուզիք որպէս կուատուն, և այլն և այլն։ Օրս չէ արժան 'ի բերան գրչի առնուլ 'ի ձանձրութիւն պատուարժան լսելեաց Սրբաբաղնութեանդ։

Այսպէս 'ի բազմոց անցից անցելոց զդայլնաքեայս գրեցաք առ Վեհութիւնդ 'ի գիտութիւն եւ 'ի ճշմարիտ տեղեկութիւն, որպէս զի մի՛ յայդ կողմանեաղ՝ Յոյնք կամ Լատինք պատրեալ 'ի ստայոգ գրութեանց բանից ոմանց ոմանց Յոյն և Լատին կարգաւորաց այսր Հրուսաղէմ եղելոց, եկեալ զպարտեսցեն զմիաբանութիւն հայազգի Ս. Թուրս առաջի Վեհութեանդ և ազգի իւրեանց վեհից և մեծաց, համարելով զմեզ իբրեւ պարտաւոր և եղբայրատեաց, որ չէ այնպէս, այլ ճշմարիտ եղեալ պատմութիւնն այս էր՝ զոր գրեցաք, որոց ամենեցուն Տէր տացէ բարին փոխան անօրինակ և անզուր արարեալ չարութեանց նախանձու իւրեանց, զոր լսուցին ամենայն հոգւով յերկուց ամաց անտի անխնայ աշխատելով, և մեք յոյս մեր Աստուած եղեալ և ապաւինեալ 'ի մաքուր մաղթանս սրբոյ Լուսաւորչին մերոյ, խնդրեմք զսուրբ օրհնութիւնդ և զօրհնաձիր պատասխանագրութիւն քո մեզ մխիթար սրտի, որ բոլոր միաբանութեամբ ըստ Հրեմիայի մարգարէին ողբս 'ի բերան, զաչս 'ի յարտասուս ունելով աղաչեմք զԱստուած բարձրեալն և ամենամարդասէր, նոցա ներել և մեզ ողորմիլ։ Աղջ լեր, ո՛ դորովագութ Հայր Սրբութեան, 'ի պայծառութիւն սուրբ և 'ի մխիթարութիւն Թոռայնոցս ամենեցուն։

1839, Սեպտեմ. 23. Հրուսաղէմ։

ՎԱՐԴԱՆԱՆՑ ԴՊՐՈՑ Ի ԿԻՊՐՈՍ

Կիպրոսի Վարդանանց Դպրոցի աշակերտաց հարցաքննութիւնն կատարուած է 'ի 12 Փետրուարի 'ի ներկայութեան տեղւոյն Մեծա. Ազգայնոց։ Այս մասին, ինչպէս Մեծ. անդամք Հոգաբարձութեան, նոյնպէս և այլ ականատես անձինք իրենց ստորագրութեամբ գոհութիւն կը յայտնեն թէ՛ աշակերտաց յառաջադիմութեան և թէ՛ Ս. Թուրս միաբան Արժա. Վարդան վարդապետի ուսուցչական աշխատութեան և հսկողութեան համար։ Մենք եւս ուրախութեամբ սրտի հրատարակելով այն բերկրաբիթ տեղեկութիւնն, քաջայոյս եմք, որ ինչպէս Մեծ. Հոգաբարձութիւնն, նոյնպէս և Արժ. Վարդապետն բարեջան աջակցութեամբ կը բազմապատկեն իրենց աշխատանքն յիշեալ դպրոցի յարատեւ յառաջադիմութիւն համար, որով բարի անուն կը ժառանգեն և մեծ ծառայութիւն կը մատուցանեն Ազգին։

digitised by A.R.A.R.@

ԳՊՐՈՑ ԼԻՖՔՈՇԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ
ՊԻՊ ՍԻՆԱՅԻՆ ԻՐԱՏ ՎԱՐ ՄԵԱԼՐԻՖԻՆԻՆ

1871	ՎԱՐԻՏԱԹ	Դր.	Փր	Դր.	Փր
Յունուար 1	Լքի պուչուք տէյիրմէնլէրին պա քանթրաթօ պիր սէնէլիք իճարլէրի	28700			
„	Ամէնէյի սապրքատան տէյիրմէնճի Նիքոլաոս քաւլան պաքայէ Թահսիլ	1784			
„	250 քյէ եաղ սաթըշընտան	1800			
„	Մոմ սանտրղընին վարիտաթը	226			
„	Լակի զիմէմաթ տէյիրմէնճի Պալըխիլտէն Թահսիլ	419	1/2		
„	Պօղոս հայր սուրբուն պահճէ իճարը	325		32929	1/2
„	Հաճի Միմէօն հանէսի քիրասընտան	360			
„	Վանքին սիւտ իճարընտան	1300			
„	„ Թէքէ սաթըշընտան	900			
„	„ Օտարէ վէ հարնըպ վէ պահճէ իրատ				
„	լէբինտէն նազրը Յովհաննէս Շահրնեան էֆէնտիյէ պա միւֆրէտաթ	3128		6313	
	Ամէնէյի սապրք սանտրքատ մէվճուտատ	...		6764	1/2
				46007	
	Լիկեղեցպան հաճի Յովհաննէսատէն	...		180	
				46187	

digitised by A.R.A.R.@

ԵԿԵՂԵՑԻՄԻՋ ԻԼԷ Ս. ՄԱԿԱՐ ՎԱՆՔԸՆ

ԻՆՄԱՏ, ՏԻՉՏԻՐԻ ՏԻՐ 1871 ՄԻՆԻՍԻՆԻ

1871	ՄԷՍԱՐԻՓԱԹ	Ղ-.	Փ	Ղ-.	
Յուն. 1	Պիր սէնէ զարֆընտաց կէրէք կարգաւորլարայ վարժապետէ վէ ֆաքիրլէրէ վէրիլէն մահիյէ պա միւֆրէտաթ	19380			
„	Սուրբ եկեղեցի իշին պա միւֆրէտաթ մէսարիֆ	1921			
„	Դպրատուն իշին պա միւֆրէտաթ „	965	1/2		
„	Լայնիյէ թամիրլէրինէ „ „	2158			
„	Ֆաքիրլէրէ իյանէ „ „	2269	1/		
„	Ընդամ բուսուամաթը „ „	652	1/2	26694	
„	Էրիքենէթէ մեսարիֆ „ „	799	1/2		
„	Օիմէմաթտա քալան պաքայէ „ „	2919			
„	Տէյրմէնճի Նէքոլատէ պաքայէ „ „	5422			
„	„ Մանոլիտէ „ „ „	140			
„	Հաճի Սիմէօն հանէսի քիրասընատան պաքայէ	180		9932	3/4
	Վանքըն կէրէք էպնիյէլէրինէ կէրէք արազիլէրինէ, նազարը Յովհաննէս Թահիրեան էլիյէ պա միւֆրէտաթ	4851			
„	Յովհաննէս Թահնեանն իւճրէթի	1000			
				6031	
				42659	3/4
	Սանաբք վիճուսաթը			3529	
				46187	1/4

digitised by A.R.A.R.@

ԱՌ ԵՐԻՑՍ ԵՐԱՉԱՑՈՑՉՆ ԱՐՇԱԼՈՅՍ

Էջմիածնոյ 631 թուոյն երրորդ երբաղն գլխաւորապէս երեք տեսիլներ կը բաղկանայ։ Առաջին երկուքն կը վերաբերին Եգիպտոսի կալուածական և առաջնորդական խնդրոյն. իսկ երրորդն Միծի խմբագրապետի անձին։ Եգիպտոսի կալուածական և առաջնորդական խնդրոյն նկատմամբ Էջմիածնոյ թէ և, իւր փաստաբանութեան խախուտ պատնէշն կրծանելու համար, խիստ զօրաւոր զէնքեր կուտայ Միծի ձեռքն. բայց Միծ բարեաք կը համարի իւր նախորդ թուով հրատարակած խոստումն յարգել և առայժմ Ազգային Վարչութեան տնօրէնութեան կատարածին սպասել։ Իսկ խմբագրապետի անձին դէմ եղած թշնամանացն վերաբերեալ Միծ. վասն զի ինքն աննեղրոզամիտ է յատկապէս ընդհանուրին վերաբերեալ վնասուց և զրկանաց դէմ, իսկ իւր անձնականին համար՝ ոչ երբէք։ Բայց որպէս զի Էջմիածնոյ մտքէն ուսուրէն գայթակղութեան մշուշը փարատուի, Միծ կարևոր կը դատի զրկել Էջմիածնոյ խմբագրապետին 'ի Նուէր՝ Եղիշ բանաստեղծութեանց տետրակն և Մոսկվայ 754 ռուբլի, 1866 ամի, զոր եթէ ուշի ուշով կարդայ Էջմիածնոյ, մանաւանդ վերջին, պիտի գտնէ իսկոյն իւր ըրած անձնական թշնամանաց անթերի պատասխանն, միայն թէ հարկ է իւր անունն փոխանակել այն անուան տեղ, որուն դէմ ուղղուած են յիշեալ գրուածքն։

Բաջայայս ենք, որ եթէ Էջմիածնոյ միամտաբար այլոց թելադրութեան հպատակած է և ոչ թէ կամովին թշնամանած, անշուշտ հեղութեան հոգով յետոյ կը կոչէ իւր զղջարտութիւնն և Մոսկվայ յիշեալ թուոյն մէջ պարունակած պատասխանն հրատարակելով կը քաւէ իւր յանդէպ տարածած գայթակղութիւնն։

Թող ուսանի Էջմիածնոյ, որ Միծ անձնականին համար ներել գիտէ, իսկ ընդհանուրին համար ոչ երբէք. վասն զի նուիրական ուխտու ուխտած է, 'ի պահանջել հարկին, ուրախութեամբ զոհել անձնականն՝ ընդհանուր իրաւանց պաշտպանութեան համար։ Միծ հաստատուն է իւր ուխտին վրայ, և որչափ այլք ջանացած են և կը ջանան անձնականի խնդիր յարուցանելով ընդհանուր խնդիրը խեղդել, ընդհակառակն Միծ միշտ ջանացած է և պիտի ջանայ ընդհանուր իրաւանց ձայնին և եթէ քարոզ հանդիսանալ, համոզուած լինելով, որ այս իսկ է իւր կոչումն ու սուրբ պարտաւորութիւնն։

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Աստանդէն գրուած (փետր. 28) վատահութեան արժանի մի նամակէ հետևեալն կը քաղեմք։ — Օրհնեալ է Աստուած, Սոյ փոքրիկին անցաւ. բաժանումն և կրօնափոխութիւնը յետս դարձաւ։ Այժմ ամենեքեան միացան սիրով և բաւական խաղաղութիւն և հանդարտութիւն կը տիրէ Սոյ վրայ։ Բանդի հռոմէական կղերը ամօթով յետ դարձաւ 'ի Սոյ դէպ 'ի Աստանդ, որ մեծ պարծանք փութացան 'ի Սիս, որպէս զի Ռիգ վիթական յաղթանակը կը կանգնէ. բայց Աստուած, որ միութեան Աստուած է, չը յաջողեց նորա նպատակը։ Արդէն աշխարհի ընթացքը յե-

digitised by A.R.A.R.@

զափոխական է անընդհատ շարունակութեամբ. շրջայրական շարունակութիւն մը, խաղաղութիւնը՝ խռովութեան, խռովութիւնը՝ խաղաղութեան յաջորդութիւն։ Ժողովուրդն ալ ճիշդ լայնածաւալ ծովու կը նմանի, որ միշտ ինքն իր մէջ կը ծփայ, երբեմն խաղաղ, երբեմն մրրկածուփ։ Դրեթէ այս պատկերը կը կրէ նաեւ Կիլիկիա քանի մը տարիէ ՝ի վեր, որ փառասէր մարդոց ձեռքը տեղի կ՚ունենայ, ինչպէս տեղի ունեցաւ անցեալ տարի ամբողջ Դաղղիոյ մէջ։ Այդ վիճակին հետ միշտ գրաւոր յարաբերութիւն ունիմ և ահա այս անգամ խիստ գոհացուցիչ է ստացած տեղեկութիւնս, զոր և ձեզ կը հաղորդեմ։ Իսպառ խափանեալ է Աքսեցւոց կրօնափոխական վիճակն։

—Ներկայ ամսոյս մէջ մեր Մաբաշցի ուխտաւորաց հետ քանի մի հուսմէադաւան հայազգի ընտանիք եւս ՝ի Ս. Աթոռս գալով, յայտնեցին իրենց դարձն ՝ի ծոց մայրենի Եկեղեցւոյն և սիրով ընդունուեցան վանուցս մէջ ՝ի շարս միւս ուխտաւորաց։

—Ներկայ տարւոյս մէջ խիստ յաճախ են Ս. Տեղեաց Եւրոպացի և Ամերիկացի այցելուներն, որոնք խումբ խումբ արք և կանայք ճանապարհային օրինաւոր պատրաստութեամբ կուգան, կը շրջապտին և կը դառնան։ Այս այցելուաց մէջ նշանակութեան արժանի էր մանաւանդ աշակերտուհեաց խումբ մի, դաստիարակուհիներով հանդերձ, որ Ս. Տեղիքն հետազօտութեամբ շրջապտելէն զկնի վերադարձաւ։

—Ներկայ ամսոյս մէջ այցելութեան եկաւ ՝ի քաղաքս Պոլսոյ Ա. Լուսաւորիչեան ընդհանուր հիւպատոս Պ. Շ. Վէկէլ։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹՔ

Ս. ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

Տպագրուած է համեմատութեամբ քանի մի տպագիր և ուրիշ գրչագիր օրինակաց, հանդերձ երկու վիմագիր պատկերներով։ Ինչպէս տպագրական մաքրութեան նոյնպէս և ամբողջական պարունակութեան կողմէն մեծ առաւելութեամբ կը տարբերի մինչեւ ցարդ տպագրուածներէն. Գին 18 դահեկան։

ԵՐԿԱՄԵԱՅ ՊԱՆԴԽՏՈՒԹԻՒՆ

Ի ՀԱՊԷՇՏԱՆ

ԿԱՄ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ

ՎԱՐՔ ՀԱՊԷՇԻՅ

Այն երկասիրութիւնն, որ տպագրուած է յանուն Վ. Եհսափառ Վիկտորիա Թագուհւոյն Անգլիոյ, կը պարունակէ իւր մէջ նոյն Տերութեան զինանշան պատկերն և Գիր. Սահակ արքեպիսկոպոսի և Տիմոթէոս վարդապետի կենդանագիրներն։ Ըստ ամենայնի հետաքրքրական է իւր բովանդակութիւնն նիւթոց նորութեամբ և անցից մանրամասնութեամբ։ Գին 20 դահեկան։

Այն երկասիրութիւնն տպագրուած է նաեւ Դաղղերէն, համաչափ և համանձեւ Հայերէն տպագրութեան։ Գին 20 դահեկան։

digitised by A.R.A.R.@

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Տպագրուած է յանուն ազնուա-զարմ և շնորհաւոր տղայ Պ. Յ. Պաքալայ Մուրատեան, Աստրիոյ Տերութեան հայազգի Փոխ—Հիւ-պատոսի քաղաքիս։

Այս երկասիրութիւնն, իւր անուան համաձայն, կը պարունակէ իւր մէջ բարոյական հրահանգիչ պատմութիւններ, խրատական գեղեցիկ յորդորներով հանդերձ, որ և կարող է Դերդաստաններու և նախակրթական Դպրոցներու մէջ ընթերցանութեան շահաւէտ գիրք լինիլ։ Գին 8 դահեկան։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ՈՒՂԵՑՈՅՑ ՍՐԲԱԶԱՆ ՏԵՂԵԱՑ

Կը պարունակէ տեղագրական և պատմական ծանօթութիւնք հին ու նոր յիշատակաց և անցից Պաղեստինի և սեպհականութեանց ազգաց, որոնք քաղուած են համազգի և օտարազգի յիշատակարաններէ և իր նամով կարգաւորուած 'ի հմտութիւն բարեպաշտ Ուխտաւորաց եւ ամեն հարցասէր ընթերցողաց։ Գին 6 դահեկան։

ՕՐԱՑՈՅՑ 1873 ԱՄԻ

Գին 40 ֆարայ։

Ս. Աթոռոյս տպագրած այն թըւականի Օրացոյցն բոլորովին անմիխիթարական է Արժ. Տ. Երեմիա քահանային համար. վասն զի այլ եւս կարող պիտի չը լինի Ամալացոյց յօրինելոյ սնապարծութեամբ պարծիլ։ Ս. Աթոռս նպատակ ունենալով օրացուցական ուսումն ընդ հանրացնել Ազգին մէջ, քանի մի տարիէն առաջ յատկապէս վարձ տուաւ Տ. Երեմիա քահանային, նոյն արուեստն ուսուցանելու համար։ Բայց յիշեալ քահանայն իւր վարձն լիովին ընդունելով հանդերձ, դարձեալ քանի քարաթագոյց ծառայի նման ծածկեց իւր գիտութիւնը, որպէս զի շարունակ կարող լինի պարծանօք ծախել զայն Ազգին վրայ, նախատել և այպանել ամեն տպեալ օրացոյցներ և Ազգային Վարչութիւնը յուզնեցնել իւր ձանձրալի և անհիմն գանգատներով ու բողոքներով։ Այսօր բարեպատեհ առիթ ունիմք ծանուցանել, որ Ս. Աթոռս լիովին յաջողած է իւր նպատակին մէջ, որ էր օրացուցական ուսման մեծավաճառութիւնն բառնալ Ազգին մէջէն։ Այսուհետեւ նոյն արուեստն, իբրև զբօսանք, դպրոցի աշակերտներուն անգամ պիտի ուսուցանեմք, որպէս զի աշխարհ ամեն տեսնէ՝ թէ որչափ անտեղի է Տ. Երեմիա հօր սնապարծութիւնն։

Այս ամեն հրատարակութիւնքն կը ծախուին նշանակեալ գիներով 'ի Դրատան Ս. Աթոռոյս և Հրուսաղէմատանն Կ. Պոլսոյ։

digitised by A.R.A.R.@

ՑԱՆԿ

ՄԱՐՏ

ՈՐԴԻՔ ԱՍՏՈՒԾՈՅ · 49
ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ · 56
Գրութիւն Գաբրիէլ պատրիարքի առ Կարբեցի Յովհաննէս կաթողիկոս · 64
Վարդանանց գպրոց ի Կիպրոս և հաշուեցոյց վանուց Հայոց · 67
Առ երիցս երաշխաւորեալն Աբշալոյս · 70
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ · 70
ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ · 71

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

Ա· Սիօնը ամսեկ ամիս կը հրատարակուի 24 երեսկ բաղկացեալ՝ մէկ կուակէս ուղղաձալ թղթով ։

Բ· Տարեկան գինն է երկու արծաթ Մէճիտիէկ ։ հանգերձ Ճանապարհի ծախքովը կանխիկ վճարելի ։

Գ· Զատ տետրակ առնել ուզողը ։ պէտք է՝ ամեն մէկ տետրին չորս՝ դահեկան վճարէ ։

digitised by A.R.A.R.@